# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի օգոստոսի 27-ի 430-Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 55-րդ կետի 1-ին ենթակետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան (Ապարան քաղաք, Արագած, Արայի, Ափնագյուղ, Երնջատափ, Եղիպատրուշ, Թթուջուր, Լուսագյուղ, Ծաղկաշեն, Կայք, Հարթավան, Չորագլուխ, Նիգավան, Շենավան, Շողակն, Չքնաղ, Ջրամբար, Սարալանջ, Վարդենիս, Վարդենուտ, Քուչակ բնակավայրեր) համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-1 և ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը, գծագրական մասերը (գոտիավորման) հաստատելու մասին>> N 152-Ն որոշումը, ինչպես նաև քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննություն իրականացնող հանձնաժողովի 22.05.2026թ. N 1 դրական եզրակացությունը և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26.05.2026թ թիվ 01/11.2/8556-2026 գրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագիծը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ՍԵՐԳԵՅ ՄՈՎՍԻՍՅԱՆ
3309890457

X

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. օգոստոսի
ք. Աշտարակ